

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձագիտական աշխատանքը կատարվել է «Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Օրհուսի կոնվենցիայի իրականացման մասին իրազեկության մակարդակի բարձրացում Հայաստանում» ծրագրի շրջանակում, որն իրականացվում է «Ա. Դ. Սախարովի մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ-ի տրամադրած միջոցներով:

Նոյեմբեր 2017թ.



Փորձագիտական աշխատանքի ամփոփ նկարագիրը

- «Օրհուսի կոնվենցիայի իրականացման մասին իրազեկության մակարդակի բարձրացում Հայաստանում» ծրագրի իրականացման աշխատանքները սկսվել են ս/թ սեպտեմբեր ամսին, իսկ Ապարան խոշորացված համայնքում՝ նոյեմբերի 1-ից:
- Հաշվետու ժամանակահատվածում, փորձագետի կողմից իրականացրած գործողությունների հիմնական նպատակն է եղել, Կոնվենցիայի Տեղեկատվության հասանելիության աշխատանքային խմբի 5-րդ հանդիպմանն ընդունված էլեկտրոնային տեղեկատվական գործիքների նպատակային կիրառման մասին առաջարկությունների ներքո, աջակցել ինքնակառավարման մարմիններին, տեղական մակարդակում բարձրացնելու շրջակա միջավայրի վերաբերյալ մշտապես թարմացվող, ճշգրիտ և գործառնական էկոլոգիական տեղեկատվության հասանելիության մակարդակը և տեղեկատվության թափանցիկությունը հանրության համար, նպաստել տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցության մակարդակի բարձրացմանը:
- Ընդունելով, որ հանրության համար շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունն ունի չափազանց կարևոր նշանակություն, նախապես, ծրագրի ղեկավարների հետ համատեղ քննարկվել է Ապարան խոշորացված համայնքի համացանցային պաշտոնական կայքի ([www. aparan. am](http://www.aparan.am)) ուսումնասիրության հարցը, կազմվել է հարցաշար, թե արդյո՞ք կայքը պարունակում է տեղեկատվություն շրջակա միջավայրի և դրանում իրականացվող կամ նախատեսվող գործողությունների, Համայնքի զարգացման ռազմավարական պլանի (այդ թվում ՇՄ պահպանության վերաբերյալ կետեր), ՇՄ վերաբերյալ ծրագրերի, ֆինանսական հաշվետվությունների, նախագծերի մասին, հասանելի են արդյո՞ք հանրությանը շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրական դրույթները, նորմերը, կանոնները, իրավական և ՇՄԱԳ փաստաթղթերը, առկա՞ է և հանրության համար հասանելի տեղեկատվությունը ՇՄ վերաբերող հանրային լսումների վերաբերյալ:
- Համայնքի ՏԻՄ պաշտոնական կայքի ուսումնասիրության և հարցաթերթիկների միջոցով հարցումների իրականացման, դրանց վերլուծության վերաբերյալ իրազեկման հանդիպումներ են տեղի ունեցել փոխադաշապետի, քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի հետ, քննարկվել են ծրագրի իրականացման հարցերը:
- Փորձագետի կողմից իրականացվել են հարցումներ նախապես կազմված հարցաթերթիկների միջոցով: Հարցմանը մասնակցել են համայնքի թվով 30 քաղաքացիներ:
Համայնքի պաշտոնական կայքի ուսումնասիրությանը վերաբերող հարցմանը մասնակցել են համայնքի ակտիվ բնակիչներ, մանկավարժներ, ՀԳ-ի ներայացուցիչներ, երիտասարդներ, բանկային ծառայողներ, ավագանու անդամներ, ՏԻՄ աշխատակիցներ, ովքեր պարբերաբար մուտք են գործում համայնքի կայք:
- Փորձագետի կողմից կատարվել է կայքի ուսումնասիրություն:
- Վերը նշված գործողությունների իրականացումից հետո, փորձագետի կողմից կատարվել է ուսումնասիրության արդյունքների վերլուծություն, առաջարկությունների ձևակերպում, աշխատանքային հաշվետվություն:

Իրականացված հարցումների արդյունքների ներկայացում

1. www.aparan.am կայքից օգտվողների շրջանում իրականացված հարցումների արդյունքները.

Հարցմանը մասնակցել են համայնքի թվով 30 քաղաքացիներ, այդ թվում համայնքային կայքը սպասարկող համայնքապետարանի մեկ աշխատակից:




Մասնակիցների գերակշռող մասը պատկանում է 35-60 տարիքային խմբին, կանանց թիվը քիչ ավելին է տղամարդկանց թվից: Մասնակիցների սեռային և տարիքային կազմի վերաբերյալ մանրամասնությունները ստորև՝ աղյուսակ I-ում:

աղյուսակ I	Հարցմանը մասնակից քաղաքացիներ			թիվը
սեռը	տարիքային շերտ՝ 16-35	տարիքային շերտ՝ 35-60	տարիքային շերտ՝ 60-ից բարձր	
արական	5	5	2	12
իգական	7	8	3	18
Ընդամենը՝	12	13	5	30


2. Քաղաքացիների՝ www.aparan.am կայք մուտք գործելու հաճախականության մասին կարելի է պատկերացում կազմել դիագրամ II-ից:

Հարցաշարի վերլուծությունը ցույց տվեց, որ հարցվածների մեծ մասը՝ 15 քաղաքացի, կայք են մուտք գործում հիմնականում ամիսը մեկ անգամ, ամեն օր կայք մտնողների թիվը փոքր է, հարցվածներից՝ 5-ը:



դիագրամ IV

3. **Հարցաշարի՝ ի՞նչ տեղեկատվություն ստանալու ակնկալիքով եք մուտք գործում համայնքային կայք, հարցի** ուսումնասիրությունը ցույց տվեց, որ կայքի այցելուներին հիմնականում հետաքրքրում են լուրերը, իրադարձությունները և հայտարարությունները (15 հարցված):
 Համայնքային ծրագրերով և ավագանու նիստերով հետաքրքրվողների թիվը շատ ավելի փոքր է, համապատասխանաբար 7 և 3 հարցվող:
 (Տես դիագրամ IV):



4. **Ձեր համայնքային կայքում, առկա է արդյո՞ք տեղեկատվությունը համայնքի շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ հարցը,** հարցման մասնակիցները գնահատել են հետևյալ կերպ.


Աղյուսակ V	
Լիովին առկա է	4
Կա որոշ տեղեկատվություն	19
Բացակայում է	7

Հարցվածների մեծամասնության կարծիքով համայնքի ՇՄ վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը կայքում բավարար չէ կամ՝ բացակայում է: Նշենք, որ հարցման բոլոր մասնակիցները կցանկանային, որ այն հանրության համար հասանելի լիներ համայնքային կայքի միջոցով:

5. **Համայնքային կայքում տեղադրված են արդյո՞ք շրջակա միջավայրի վերաբերյալ Օրենսդրական դրույթներ, նորմեր, կանոններ կամ այլ իրավական փաստաթղթեր** հարցի վերաբերյալ հարցման մասնակիցները հայտնել են հետևյալ կարծիքը.

Հարցվածների 10%-ը (3 հարցված) տվել են դրական պատասխան, 23%-ը (7 հարցված) կարծում են, որ տեղադրված չէ 67%-ը (20 հարցված) կարծում են, որ տեղադրված է դրանց որոշ մասը միայն.
 (Տես դիագրամ VI):


դիագրամ VI



6. Հարցվածներից բոլորը դրական գնահատական են տվել շրջակա միջավայրի վերաբերյալ Օրենսդրական դրույթների, նորմերի, կանոնների կամ այլ իրավական փաստաթղթերի՝ համայնքային կայքում հասանելի լինելու հարցին:

7. Հարցման մասնակիցներից 53%-ի կարծիքով **համայնքի զարգացման ռազմավարական պլանը, շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ կետերը, շրջակա միջավայրի վերաբերյալ ծրագրերը**, ֆինանսական հաշվետվությունները կամ նախագծերը համայնքային կայքի միջոցով մասամբ են հասանելի բնակիչներին, 27%-ը կարծում են, որ հասանելի են և 20%-ը՝ ոչ:

դիագրամ V




8. Հարցվածների մեծ մասը (18) տեղեկացված են, որ գոյություն ունեն օրենսդրական դրույթներ, որոնք պահանջում են, որ վերը նշված փաստաթղթերը հասանելի լինեն համայնքային կայքի միջոցով, հարցվածներից 4-ը պատասխանել են, որ տեղյակ չեն, իսկ մնացածը այս հարցին չեն պատասխանել:

9. Նշենք, որ բոլոր հարցվածները ցանկություն են հայտնել համայնքային կայքի միջոցով գտնել տեղեկատվություն շրջակա միջավայրի վերաբերյալ ծրագրերի, նախագծերի, ֆինանսական հաշվետվությունների մասին:

10. **Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ փաստաթղթերի՝ (ՇՄԱԳ)** համայնքային կայքում առկայության և հասարակության համար հասանելիության հարցին, հարցվածներից 15-ը պատասխանել են, որ այդ փաստաթղթերը հասանելի չեն, 13-ը, որ հասանելի են ոչ բոլորը, 2-ը գտնում են, որ հասանելի են (Տես դիագրամ VII):


11. Վերլուծությունը ցույց է տալիս, որ հարցվածների գերակշռող մասը (18) չգիտեն, թե գոյություն ունեն արդյո՞ք օրենսդրական դրույթներ, որոնք պահանջում են, որ վերոնշյալ փաստաթղթերը հասանելի լինի համայնքային կայքի միջոցով, 8-ը տվել են դրական և հարցվածներից 1-ը՝ բացասական պատասխան:

12. Բոլոր հարցվածները գտնում են, որ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ փաստաթղթերը (ՇՄԱԳ) պետք է հասանելի լինեն հասարակության համար համայնքային կայքի միջոցով:



դիագրամ VII

13. Հարցմանը մասնակցած քաղաքացիների 60%-ը գտնում են, որ համայնքում պլանավորվող շրջակա միջավայրի ոլորտին վերաբերող հանրային լուումների մասին տեղեկատվությունը հասանելի չէ համայնքային կայքի միջոցով, 33%-ը այն կարծիքին են, որ կայքում տեղեկատվությունը հանրային լուումների մասին լիարժեք չէ / մասամբ է հասանելի / և 7%-ը՝ կարծում են, որ հասանելի է (Տես դիագրամ VIII):




14. Գոյություն ունեն արդյո՞ք օրենսդրական դրույթներ, որոնք պահանջում են, որ հանրային լուումների վերաբերյալ տեղեկատվության տարածումը էլեկտրոնային միջոցներով ՏԻՄ-ի գործառույթն է: Այս հարցին 24 հարցված դժվարացել է պատասխանել, 5-ը, որ ծանոթ են այդ օրենսդրական դրույթներին:

15-16-17. **Շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ կամ դրան առնչվող տեղեկատվության տրամադրման հարցի** վերաբերյալ հարցման արդյունքում պարզվել է, որ հարցվածների գերակշռող մասը հարցումներ դեռ չի ուղղել, բացի այդ, հարցվածներից բոլորը չգիտեն, գոյություն ունեն արդյո՞ք օրենդրական դրույթներ, որոնք պահանջում են, որ վերոնշյալ տեղեկատվությունը տրամադրվի հարցման հեղինակին: Մակայն բոլոր հարցվածներն այն կարծիքին են, որ եթե հարցում անեն համայնքի ղեկավարին, հարցված բնապահպանական տեղեկատվությանը չտիրապետելու դեպքում, նրանց կուղղորդեն, թե ինչ մարմնի է պետք դիմել:

18. Բոլոր հարցվածները, առանց բացառության ցանկություն են հայտնել, որ կազմակերպվեն իրազեկման միջոցառումներ, որոնք կնպաստեն հանրության կողմից բնապահպանական տեղեկատվության պահանջարկի մեծացմանը իրենց համայնքում:

Գիագրամ XI.



19. Հարցումից պարզ է դառնում նաև, որ հարցվածների մեծամասնության կարծիքով համայնքային կայքի միջոցով հանրության համար համայնքի շրջակա միջավայրի վերաբերյալ վերջնական որոշումները հասանելի չեն:

20. Հարցումը ցույց տվեց նաև, որ հարցվողներից 20-ը նախընտրում են լարային ինտերնետ, հեռախոսային և անլար ինտերնետ՝ 5-ական հարցվող: Հարցման բոլոր մասնակիցները այն կարծիքին են, որ համայնքի կայքում վերջին 3 տարում՝ սկսած 2015թ.-ից, շրջակա միջավայրի վերաբերյալ կամ դրան առնչվող տեղեկատվությունն մնացել է նույնը:

21. Հարցումից պարզ է դառնում նաև, որ հարցաթերթում ներկայացված բնապահպանական բոլոր խնդիրների նկատմամբ առկա է հետաքրքրություն բոլոր հարցվողների կողմից: Հարցվածների մեծ մասը կարևորել են էկոլոգիայի հարցը և առաջարկել համայնքապետարանին ուշադրության կենտրոնում պահել բնակչության շրջանում էկոլոգիական մտածելակերպի դաստիարակության հարցերը:

Փորձագետի կողմից կատարած համայնքային կայքի ուսումնասիրության վերաբերյալ

Դիտարկումների ներկայացում

Կայքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվությունն աննշան է: Շրջակա միջավայրի պահպանությունը, շրջակա միջավայրի ծրագրերը հիմնականում վերաբերում են շաբաթօրյակների, սանմաքրման և բարեկարգման, սելավատարերի մաքրման աշխատանքների կազմակերպմանը:

Կայքի այցելուն կարող է տեղեկատվություն ստանալ Համայնքի զարգացման ռազմավարական պլանի, ավագանու նիստերի և որոշումների, համայնքի բյուջեի և դրա կատարողականի՝ եկամուտների, ծախսերի, մուտքերի մասին:

Համայնքի զարգացման ռազմավարական պլանում ներառված են համայնքի շրջակա միջավայրին վերաբերող հարցեր՝ ներկայացված են համայնքի բնապահպանական խնդիրները, դրանց լուծման ուղիները, սակայն ռազմավարական պլանի այս բաժինը շատ սեղմ է և չի պարունակում լիարժեք տեղեկատվություն համայնքի այս ոլորտի մասին:

Կայքի տեղեկատու բաժնի իրավական ակտեր ենթաբաժնում ներկայացված են մի շարք Օրենսդրական դրույթներ, նորմեր, կանոններ, իրավական փաստաթղթեր: Սակայն շրջակա միջավայրի վերաբերող Օրենսդրական դրույթներ, նորմեր, կանոններ, իրավական փաստաթղթեր քիչ են կամ՝ չկան:

Հիմնականում համայնքապետարանն առաջնորդվում է ՏԻՄ օրենքով: Այն դրույթները, որ կան համայնքային կայքերի բովանդակության վերաբերյալ, պահպանված են:

Կայքում բացակայում է, կամ դժվար է գտնել տեղեկատվություն համայնքում իրականացվող ծրագրերի, պլանների, նախագծերի վերաբերյալ հանրային լուսմների մասին, բացակայում են նաև հայտարարությունները հանրային լուսմների մասին:

Իրականացրած հարցումների վերլուծության և փորձագետի կողմից համայնքային կայքի ուսումնասիրության հիման վրա կատարված

Առաջարկությունների ներկայացում

- Հանրության համար բնապահպանական տեղեկատվության հասանելիությունը ապահովելու նպատակով համայնքային կայքերում արտացոլել տեղեկատվությունը համայնքի շրջակա միջավայրի վիճակի, շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված ծրագրերի, նախագծերի, դրանց ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:
- Հարցումների վերլուծությունը ցույց է տալիս, որ հանրային լուսմների վերաբերյալ տեղեկատվությունը կայքում բացակայում է, հայտարարություններ հանրային լուսմների մասին նույնպես չկան, նկատվում է պասիվություն համայնքում իրականացվող ծրագրերի վերաբերյալ հանրային լուսմներին և քննարկումներին մասնակցելու առումով:
Հետևաբար՝
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ փաստաթղթերի (ՇՄԱԳ) հասանելիությունը ապահովելու նպատակով, անհրաժեշտ է կայքում տեղադրել ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԸ կամ օրենքի այն հոդվածները, որոնք վերաբերում են
 1. *Գնահատման և փորձաքննության գործընթացում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններին.*
 2. *Հանրային լուսմների մասին հանրության ծանուցմանը և քննարկումների իրականացմանը:*
- Համայնքային կայքերում տեղադրել «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ(Ընդունված 2013 թվականի հունիսի 19-ին), որը վերաբերում է **Համայնքի բնակիչների մասնակցությանը տեղական ինքնակառավարմանը:**

Մույն աշխատանքը իրականացնող փորձագետ՝
Հեռ.՝ (+374 94) 22 49 26
Էլ.փոստ [aarhusaparan@mail.ru](mailto: aarhusaparan@mail.ru)

Նատալյա Մանուկյան